ԱՂՈԹՔԻ ԽՈՐՀՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐ. ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՄԵՋ՝ ԸՍՏ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱԿՈԲ ՆԱԼՅԱՆԻ

ՎԱՀՐԱՄ ԼԱԼԱՅԱՆ

Աստծո հետ հարաբերվելու լավագույն միջոցը աղոթքն է: Արդեն իր մեկնության նախաբանում («նախադրութիւն»)՝ աղոթքի սահմանման մեջ խորհրդաբանական միտումն ակնհայտ է. «՝՝ դարձումն մտաց առ Աստուած՝ սուրբ եւ խոնարհ յոժարութեամբ»[1]*: Աղոթքը, սակայն, միայն պարզ աստվածահայեցություն չէ, այլ խորհրդավոր մի պատուհան, որով նաև երկնային իմաստության լույսն է հեղվում բանականների վրա. «(Է՛) երկնային իմն բանալի, որով կարեմք բանալ զամենայն գանձս Աստուծոյ…»[2]: Ավելին, աղոթքով են առաքյալները վերնատանը «ստացել» Ս. Հոգին[3]: Աղոթքով «շնչում է» անձնավոր հոգին, սակայն նրա տված պտուղներից «ճաշակում է» ողջ մարդկային բնությունը. »Ի ձեռն աղօթից կոյրք լուսաւորեցան, անդամալոյծք առողջացան, մեռեալք յարեան»[4]:*

Նարեկա վանքի ճգնավորի աղոթքը սկիզբ է առնում որպես աստվածահաճո հառաչաձայն.

1 «Զա՛յն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից աղաղակի
2 Քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց»

Բան Ա – (ա - 1–2)[5],

երբ բանավոր խոսքերի փոխարեն Աստծուն նվեր են մատուցվում սրտի հառաչանքները, լացկան ողբերի փոխարեն՝ հոգու հեծությունը, աղաղակի փոխարեն՝ սրտի գոչյունը, քանզի գաղտնատես է Նա և ամենազոր ու հեշտությամբ «ընթերցում է» մարդկային սրտի թաքուն էջերն ու մտային խորհուրդները[6]: Այսինքն, աղոթական այս վիճակը չի կարող դժվարացնել կամ կասկածի ենթարկել Աստծո հետ լիակատար հաղորդակցության իսկությունը: Հովնան

---

[1] *Յակոբ պատրիարք Նալեան. Գիրք մեկնութեան աղօթից սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, հրեշտական վարդապէտին (այսուհետև՝ Հ. Նալյան), Կոստանդնու պոլիս քաղաքի, յամի Տեառն, 1745 դեկտեմբերի Իբ Հայոց ռճդդ, էջ ա: Հմմտ. Ներսես Սինայեցի. Աղօթքի մասին.– «Գանձասար», հ. Ա, Երևան, 1992, էջ 180, 184:*

[2] *Հ. Նալյան, էջ ա:*

[3] *Հմմտ. նույն տեղում, էջ 1:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Գր. Նարեկացի. Մատեան Ողբերգութեան, աշխ. Պ. Մ. Խաչատրյանի և Ա. Ա. Ղազինյանի, Երևան, 1985:*

[6] *Հմմտ.Հ. Նալյան, էջ 20:*

Մարգարեն կետի փորից էր Աստծուն աղոթում և լսելի դառնում[7]: Օգոստինոս Երանելին ուսուցանում է, որ աղոթքի ժամանակ պետք է աղաղակել ոչ թէ ձայնով, այլ՝ մտքով, քանզի լռությունն էլ է Աստված լսում (ինչպես Մովսեսի դեպքում, երբ ասում էր. «Ինչո՞ւ ես գոչում»)[8]: Եվ Նարեկացին խնդրում է (Աստծուց) լսել իր ներքին հառաչանքները.

94 «Լո՛ւր ինձ նախ քան զկարդալս իմ առ Քեզ, միայնդ հզաւր»

Բան Բ – (գ - 94)[9]

Այսպես, խորհրդաբար, նա բանավոր պատարագ է մատուցում՝ իր սրտի դրախտի լավագույն պտուղները ընծայաբերելով:

Եկեղեցական ծիսակարգի հետևողությամբ հրի փոխարեն վերցնում է թախիծը (որ ներքին ախտերի կիզիչ է), նվիրվելիք պտուղների փոխարեն՝ սրտի իղձն ու փափագը (որ երկյուղով ճենճերելն է կամ ծխալը), իսկ բուրվառի միջոցով հանդես է գալիս կամքը.

3 «Եւ մատուցեալ եդեալ ի հուր թախծութեան անձին տոչորման
4 Զպտուղ ըղձից ճենճերոյ սասանեալ մտացս՝[10]
5 Բուրվառաւ կամացս առաքել առ քեզ...»

Բան Ա – (ա - 3–5)

Սարգիս Շնորհալին այստեղ «թախծության հուրը» մեկնում է որպես աղոթքի հանդեպ կամքի հոժարություն, քանզի մինչ բաղձանքով ջերմանում է հոգին, վառվում է ինչպես հուր (ուր եթե աղոթքի խունկ գցվի՝ անուշահոտություն կլինի)[11]: Իսկ հոգին Աստծո սիրուց է ջերմանում ու «վառվում», թեկուզև անձը գտնվի ապաշխարության աղոթքի մեջ, զղջման հոգեվիճակում[12]:

Գրիգոր Նյուսացին «Երգ Երգոցի» «որք արբուցին ի խնկոցն գոլորշեաց ի վերայ ցողելով զանուշահոտութիւն» արտահայտության մեկնության մեջ զմուռսը համարում է թաղման և մեռելության խորհրդանիշ, իսկ կնդրուկը՝ աստվածային պաշտման նվեր[13]: Եվ ոչ ոք չի կարող Աստծուն կնդրուկ լինել և ծխացող խունկ, եթե նախ զմուռս չդառնա, այսինքն, երկրային անդամները սպանելով, Քրիստոսի հետ թաղված չլինի[14]: Յուղով Նարեկացին հասկանում է խորհրդի մատուցած աստվածային գինին, զմուռսով՝ առաքինությունն ու վարքի մաքրությունը, որ փոշուց է (փշրված սրտից ծնված) և ջերմեռանդության յուղի հետ խառնված՝ (որպես մեղքի վերքերին դեղ ու սպեղանի)[15]: Այս-

[7] *Հմմտ. նույն տեղում, էջ ի:*
[8] *Հմմտ. նույն տեղում:*
[9] *Հմմտ. նույն տեղում, էջ 36:*
[10] *Հմմտ. նույն տեղում, էջ ի.ա:*
[11] *Հմմտ. նույն տեղում:*
[12] *Հմմտ. Գ ր. Տ ա թ և ա ց ի. «Աղոթքի մասին».– «Վէմ», 2000, էջ 307:*
[13] *Հմմտ. Հ. Ն ա լ յ ա ն, էջ ռձէ:*
[14] *Հմմտ. նույն տեղում, էջ ռձզ:*
[15] *Հմմտ. նույն տեղում:*

պես մյուռոնի յուղը դառնում է ընտանի և «հարազատ» Բան ՂԳ (դ-71) մարդկային բնությանը: Ինչպես հնում զոհաբերվող կենդանու ճարպն ու արյունը որպես անուշաբույր ծուխ էին մատուցում ու հեղում Աստծուն, այնպես էլ աղոթքով (այժմ) հոգու բույրն է ընծայվում՝ նման մյուռոնին, որի մէջ ճարպը խորհրդանշում է մարմինը, իսկ արյունը՝ մարդու հոգին ու շունչը[16]:

Եվ քանի որ անձը մկրտությամբ ընդունում է որդեգրության հոգին (ըստ Պողոս առաքյալի՝ «առաքեաց Աստուած զՀոգի Որդւոյն Իւրոյ՝ ի սիրտս մեր, որ աղաղակէ աբբա՛… Հա՛յր» Գաղ. դ – 6 հմմտ. Հռոմ. Ը – 15), որպեսզի Ս. Հոգու տաճար դառնա, ապա նարեկյան աղոթքը ոչ միայն բարոյապես է որդու աղոթական կեցվածք, այլև խորհրդական ընկալմամբ, քանի որ հիմքում որդեգրության հոգին է ու խորհրդական սերը: Այսպես Ս. Հոգու շնորհով սրբագործված աղոթքը ներքին զգայությունների միջոցով վեր է հառնում սրտի «խորհրդակիր սենյակից» (հմմտ. Բան Ա (ա-11)՝ դառնալով Աստծու հետ հաղորդակցման անխզելի կամուրջ. «ի խորոց սրտի՝ խոսք ընդ Աստուծոյ»:

Սակայն մարդ – Աստված օտարացումը, որ ի հայտ է գալիս մեղքի պատճառով, մարդկային հոգին դարձնում է «մերժեալ տաղաւար» հմմտ. Բան Բ - (ա–26), քանզի լինելով բանական տուն եւ Աստծո տաճար, հոգևոր բորոտության մեջ հայտնված անձը անհարմար է դառնում Աստծո բնակության համար.

32 «Յարկս բանական՝ ունողս բորոտութեան…»

Բան Բ – (ա-32)

Այս իրավիճակում հստակ է մի բան՝ ինչպես առանց հավատի (ըստ ուղղափառ քրիստոնեական ընկալման) չկա փրկություն, այնպես էլ առանց խոստովանության՝ քավություն: Եվ Նարեկացին, որպես խոստովանող, սգատուն տենչացող մի իմաստուն է, որ Աստծո նկատմամբ տածած սիրուց իր ամենառխերիմ թշնամին համարում է հենց իրեն, որ հակված է չարի հետ հաղորդակցության կամ մեղսագործության: Այս առումով Նարեկացու աղոթական ճառերը իրենց խոհափիլիսոփայական և աստվածաբանական շերտերից բացի, խոնարհության, հեզության, ինքնադատապարտման հոգուց բխած աղերսագին խոստովանություն են, որ մաքսավորի աղոթքի պես առավել ընդունելի են Աստծուն ու բացահայտում են ճշմարիտ աղոթքի կատարելության ոգին: Սակայն այդ ոգին «հայտնաբերելը», ըստ եկեղեցական հայրերի, մեծ ջանքեր և իմացություն է պահանջում: Նարեկացին ևս մտահոգ է անպտղաբեր աղոթք ունենալու համար.

83 «Մի՛ լիցի ինձ երկնել, եւ ոչ ծնանել»

Բան Բ – (գ-83)

[16] *Հմմտ. նույն տեղում, էջ ոձբ:*

Այսինքն՝ աղոթական աշխատության մեջ կենցաղավարել, սակայն զերծ մնալ հոգևոր վաստակից[17]

93 «Զքեզ տեսանել, եւ դատարկ ելանել»

Բան Բ – (գ-93)՝

չլինի, որ աղոթքով քեզ տեսնեմ ու Քո երեսի պարգևներից զուրկ հեռանամ[18]*:*

«Մատյանը» գրելով «ի խնդրոյ հայցման հարց միանձանց եւ բազմաց անապատականաց» («գրութիւնք» Մատեան ողբերգութեան, էջ 245), Նարեկացին Աստծուն է դիմում, որ այս աղոթքների միջոցով բոլոր խնդրվածքները լսելի լինեն ու հոգևոր առողջության շնորհի պատճառ դառնան[19]*:*

Միաժամանակ «Մատյանն» արարելու գործում նա Ս. Հոգու հանճարի գործությանն է ապավինում.

142 «Եղիցի՛ հոգի քո խառնեալ ի սա,
143 Շունչ զաւրութեան Մեծիդ միասցի՛
144 Ի Քո ինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս»

Բան Գ (ե - 142–144)

Ս. Հոգու շնորհն է նաև, որ աղոթքի ժամանակ պայծառացնում է մարդու հոգևոր տեսողությունը, երբ աստվածտեսությունը «պարգության» հասնելով «գործում է» որպես «հավատի միեղեն շնորհական տեսություն»՝ անհասանելի մտքի համար.

43 «անմատոյց լուսովդ պարածածկեալ»

Բան ԺԸ (դ - 43)

Աստծո մասին երբեմն ասվում է, թե Մեգ ու խավար է Նրա շուրջը (անհաս է – Վ. Լ.) երբեմն թե՝ անմատչելի լուսով է պարուրված (ըստ Եզեկ. Ա-28[20]*): Ըստ Դիոնեսիոսի՝ Մեգը անմատչելի Լույսն է, որտեղ Աստված է բնակվում և որն աներևույթ է գերպայծառության պատճառով*[21]*:*

Ըստ Նարեկացու՝ Աստված ոչ թե արտաքին վարագույրով է ծածկված, այլ անճառելի հրաշալիքներով ու սքանչելիքներով[22]*.*

44 «Ուր ոչ է քղանցք ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ
45 Այլ տարածումն հրաշից ամենայն ուրեք զաւրացեալ:»

---

[17] *Հմմտ. նույն տեղում, էջ 35:*
[18] *Հմմտ. նույն տեղում, էջ լգ:*
[19] *Հմմտ. նույն տեղում, էջ խդ:*
[20] *Հմմտ. նույն տեղում, էջ 132:*
[21] *Հմմտ. նույն տեղում:*
[22] *Հմմտ. նույն տեղում:*

Բան Ժը (դ - 44–45)

Աստծո Որդու մարդացումն ու փրկագործական ինքնազոհաբերությունը փոխակերպեց մարդ – Աստված հարաբերության բնույթը, Աստծո հետ մերձեցման հնարավորությունները.

10 «Որ միայն մարմնացար վասն մեր ըստ մեզ,
11 Զի արասցես զմեզ վասն Քո, ըստ քեզ»

Բան Ժթ – (ա - 10–11)

Ինչպես սուրբ աղոթքի ձգտող յուրաքանչյուր ճգնավոր, Նարեկացին ևս մեծ ողբերգություն է ապրում «խորհուրդների պատերազմում» իր անսանձ մտքերի անկումները տեսնելով.

66 «Ի թռիչս մտաց ընդ խաւար խորհրդոց սլացայ»

Բան Ի – (ե - 66)

Պատասխանատվությունը ավելի է մեծանում իր հայտնի տեսիլքից հետո, երբ արևածագին, Նարեկա վանքում նրան երևում է Քրիստոս՝ Աստվածածնի գրկում.

70 «Զքեզ իսկ տեսի հոգացեալ վասն իմ,
71 Զոր չէ աստ գրելի, եւ ոչ պատկառեցի:»

Բան Ի – (ե - 70–71)

Հաճախ ճգնավորները ընկնելով մարմնական ճգնության սխրանքների մեջ, անուշադրության են մատնում խորհուրդների վերահսկողության ոլորտը և փոքր համարում Աստծո առջև «մտաց սայթաքումները» (իրականում խորհուրդների արմատները ոչ այնքան մտքում են, որքան սրտում – Վ. Լ.) կամ հակառակը, անընդհատ կենտրոնացած լինելով խորհուրդների վրա, անտեսում են մարմնի սանձահարման գործը[23]: (Երկու դեպքում էլ թերի է դառնում մեղքի դեմ պայքարի մարտավարությունը).

33 «Եւ ի մտացն մարտ՝ ի փոքունցն յաղթահարեալ»

Բան Իգ – (բ - 33)

Խորհուրդների պատերազմում Նարեկացին կարևորում է ներքին արթնության վիճակը, քանի որ ճգնավորի գլխին մահացու հարված կարող է

[23] *Հմմտ» նույն տեղում, էջ ճծէ:*

իջնել այնտեղ, որտեղ ինքը չէր սպասել ու նախատեսել: Այսպես, եթե ապաշխարությամբ անձը նորից պսակվի շնորհներով ու հպարտանա, կնմանվի լույսից կուրացածի կամ դեղից մահացածի: Այս վիճակում Նարեկացու լեզուն բարոյական կապանքների մեջ է հայտնվում, իսկ աղոթքը՝ բանտի.

1 «... ո՞րոց խնդրոց արժանաւոր վարկանելով զիս՝ մատչիմ աղերսել»

Բան – Իդ – (ա-1)

12 «Եթե զգեստո՞վն լուսոյ պարծիմ, յորմէ մերկացայ»

Բան – Իդ - (բ-12)

18 «Եթե ի փրկութեանն նորոգութի՞ւն, յորմէ մահացայ»

Բան – Իդ – (բ-18)

Ի վերջո, Ս. Հոգին տեսնելով մարդկային սրտի խավարապատ վիճակը, տրտմությամբ հեռանում է. «Հոգին Իմաստութեան փախիցի ի նենգութենէ, եւ հեռացի ի խորհրդոց անմտից»՝ (Իմաստ. Սող. Ա-5)[24]: Մեղքի խորհուրդների դեմ հակառակությունը, որ նաև սուրբ աղոթքի (և, ի վերջո, «Ս. Հոգու համար») պայքար է, առավել արդյունավոր է ինքնաճանաչողությամբ: Վերջինս, թերևս, յուրահատուկ աստվածային շնորհ չէ և շատերին է հասանելի: Մեղքը մարդկային բնություն է ներթափանցում երկու ճանապարհով՝ հինգ (մարմնական) զգայարաններով և անձնիշխան կամքով (անձի ազատ կամքով)՝ արտաքին ու ներքին[25], երբ մեղքի ծառան կամազրկվելով, կորցնում է ներքին ազատությունը[26].

37 «Մեղաց եւ մահու զինուք զգայարան գաղտնեացս խոցի»

Բան ԻԶ – (բ - 37)

Աստծո խոսքի հատու սուրը փայլատակելով, խոցում է մարդկային սիրտը, քանի որ նրա մտքում ծնված յուրաքանչյուր խորհրդի բարոյական գնահատականն ունի.

39 «Սուր սուսերաւ սաստից զոյութիւն բնութեանս յաւշատի»

Բան ԻԶ – (բ - 39)

Մարդու բնության մեջ հոգու և մարմնի հարաբերությունը արդար է և բնական, երբ աստվածապատկեր հոգին իշխում է անասնապատկեր մարմնին

[24] *Հմմտ. նույն տեղում, էջ ճհ:*
[25] *Հմմտ. նույն տեղում, էջ ճձա:*
[26] *Հմմտ. նույն տեղում, էջ 181:*

ու հոգևոր պահանջմունքները գերակա են մարմնավորից[27]*: Իսկ հակառակ կարգի առկայությունը մեղքի վիճակն է՝ հոգու ստրկացումը մարմնին.*

11 «Գերեալ որսողին մոլեկան մարմնոյս,
12 Ներհակ տնկակից, յոգնապատճառեան ամենավարան»

Բան Լ – (ա - 11–12)

Աստված մարդու մարմինը չորս հակոտնյա տարերքներից է ձևավորել, որոնք չորս մարմնական վիճակներ են առաջացնում[28]*.*

12 «Հակառակաւքն հանդերձեցեր զկազմած մարդոյս,
13 Զոմն՝ ծանր, եւ զոմն՝ թեթեւ,
14 Զմին՝ զով, եւ զմիւսն՝ հրային...»

Բան ՁԶ – (ա - 12–14)

Ըստ միջնադարյան մտածողության (և անտիկ շրջանից եկած տեսության)՝ մարդու կողմից այս կամ այն մեղքի նկատմամբ հակվածությունը կարող է պայմանավորված լինել նաև մարմինը կազմող բնական տարրերի փոխհարաբերությունների կամ փոխազդեցությունների վիճակով (հուր-ջուր, օդ-հող): Հրի առավելությունը մարդուն դարձնում է բարկացկոտ, օդի գերակայությունը՝ հպարտ ու փոփոխական, ջուրը՝ բղջախոհ, իսկ հողը՝ ծույլ[29]*: Այսպես, մարմնական մասի բնական տարրերի անհամաչափ գետեղվածությունը մարդու բնության մեջ կարող է կերտել որոշակի բնավորություններ և հոգեկան խառնվածքներ՝ այս կամ այն մեղքի հանդեպ տրամադրվածությունը հասցնելով մինչև մարմնական կառույցի բաղադրամասեր: Եվ սա այն դեպքում, երբ անձը բանականի կարողությամբ ի զորու չէ ինքնատիրապետման (բանականը չի իշխում ցասմնականի, իսկ ցասումը՝ ցանկականի վրա): Սակայն Ս. Հոգու շնորհով զորանալով ու մեղքի դեմ աննահանջ մարտնչելով, մարդը կարող է խաղաղեցնել իր բնության ալեկոծումները՝ հասնելով արդարության.*

15 «Զի դիմադրութիւն ի հակառակացն հարթ պահեցեալ՝
16 Արդա՛ր կոչեսցուք հաւատարիմ հաւասարութեամբն»

Բան ՁԶ – (ա - 15–16)

Մարմնականի և հոգեկանի ներհակությունն առանձնապես նկատելի է տեսողության ժամանակ, երբ հոգին տրտմությունից լալիս է, իսկ աչքերը անհոգաբար շարունակում են դիտել գայթակղիչ տեսարաններ կամ հոգին ձգտում է մաքրամատույց աղոթքով Աստծուն ներկայանալ, սակայն արդյուն-

---

[27] *Տե՛ս նաև՝ Վ. Լ ա լ ա յ ա ն. Իսկը Երանիները հայ խորհրդաբանական ավանդույթի մեջ.– «Էջմիածին», 2009, Ժ, էջ 28–29:*

[28] *Տե՛ս նաև՝ «Էմպեդոկլես» փիլիսոփայական բառարան, Մ. Ռոզենտալի խմբագրությամբ, Երևան, 1975, էջ 132:*

[29] *Հմմտ. Հ. Ն ա լ յ ա ն, էջ 223:*

քում մարմնական հեշտության կայծերն են բարձրանում հոգեկան երկնակամար: (Մարմնական բնությունից սնվող ցանկասիրության հրացայտերը միշտ էլ սպառնալիք կարող են դառնալ աղոթարարի համար[30]):

Քրիստոս, ինչպես ռազմատենչ մի թագավոր, սրբազան պատերազմ հայտարարեց մեղքի բոլոր դրսևորումներին՝ չար խորհուրդները, մտքերը և խոսքերը հավասարեցնելով չարագործությանը՝ ամենքից պահանջելով սրտի սրբություն. «Եղերոք դուք կատարեալք, որպէս եւ Հայրն ձեր Երկնաւոր կատարեալ է» – (Մատթ. Ե-48): Այսինքն՝ Քրիստոսից տրված կատարելության չափանիշը բացարձակ սրբությունն է, երբ մարդկային հոգին մաքրագործվելով՝ պիտի դառնա Ս. Հոգու հանգրվան: Առօրյա կյանքում, եթե մարդը բազում ջանքեր է գործադրում մարմնական վերքերի լվացման, բժշկության և առողջացման համար, ապա հոգու ախտերի խնդիրը նրան առանձնապես չի մտահոգում, թեև այն շատ ավելի թանկ է մարմնից: Եկեղեցին մեղքերի դեմ մարտի փող է հնչեցնում, սակայն, ըստ Նարեկացու.

66 «փողեն՝ եւ ոչ զումարիմ,
67 (կամ թշնամուց – Վ. Լ.) Վիրաւորիմ՝ եւ ոչ եւս զգամ»

Բան Ծդ – (դ - 66–67)

(Այս իրավիճակում, երբ չկա մեղքի գիտակցություն և Աստծո առջև պատասխանատվություն, աղոթքի մասին խոսելն ավելորդ է): Այսպես մարդը կարող է վերածվել անզգա կուռքի, որ ոչ միայն իր կամքն է կուռք դարձրել՝ հակադրվելով Աստծո կամքին, այլև «այս աշխարհի» պատրանքի մշուշում իր (բարոյապես) մեռած լինելը չգիտակցել: Չափազանց վտանգավոր իրադրություն, երբ թշնամի սատանայից ու նրա զորքից հոշոտվելով, անձը օգնության աղաղակ չի բարձրացնում: Այդպիսին է նաև ծուլության մեղքից ծնված պարապության վտանգը, քանզի դատարկություն, որպես այդպիսին գոյություն չունի, այլ առկա է առաքինության գործերի արդար վաստակի բացակայություն, երբ մարդկային բնությունը դառնում է օտար ազդեցությունների ձեռքի խաղալիք[31]: Արդեն լեզուն զսպելը մեծ ճգնավորական ձեռքբերում է (ըստ Լամբրոնացու՝ ոչ ոք չի կարող իրեն տեսնել կամ Աստծուն մտահայել, եթե միտքը չի ազատել լեզվի սպասավորությունից)[32] և «այս աշխարհի» աղմուկը հաղթահարելն ու լռություն «ստանալը» աղոթական բարձր աստիճան է, քանզի Աստված ապրում է «լռության Մեգի» մեջ:

Աստծո Որդու մարդեղությամբ ու Խաչի չարչարանքներով նոր «գործիքներ» են ավելանում խորհրդապաշտ կրոնավորների աղոթական արվեստի «ընտրողության[33] զինանոցում»: Քրիստոսի չարչարանքների ժամանակ սրբագործված մասունքները, Նրա համբերությունը, կրած վշտերը, տառապանքները և նույնիսկ նվաստացումները յուրահատուկ հոգևոր զենքեր են դառնում չարի զորություններին դիմակայելու գործում: Ըստ Հովհան Ոսկեբերանի՝

[30] *Հմմտ. Ն ե ղ ո ս Մ ի ն ա յ ե ց ի. նշվ. հոդվ., էջ 185:*
[31] *Հմմտ. Հ. Ն ա լ յ ա ն, էջ նը:*
[32] *Հմմտ. նույն տեղում, էջ նխե:*
[33] *Տե՛ս Վ. Լ ա լ ա յ ա ն. նշվ. հոդվ., էջ 26:*

Քրիստոսի Խաչը սարսափելի է սատանայի ու դևերի համար, քանզի նրանով խոցվեց չար հրեշտակապետը, և ապստամբ դևերը պարտություն կրեցին[34]*:*

Քրիստոսի խաչափայտի և նրա չարչարանքների վրա մտասևեռումը լավագույն ընտրողությունն է, որի մասին Պողոս առաքյալն ասում էր, որ, Աստծո Որդու չարչարանքների մասին մտածելով, չկա աշխարհում նեղություն ու վիշտ, որ հնարավոր չլինի համբերել[35]*:*

Հոգևոր պատերազմում բացառիկ է Նարեկացու մարտավարությունը.

90 «Մարտն, որ առ իս, քե՛ւ տէր վանեսցի»

Բան ԿԶ – (դ - 90)

Առաջին հերթին Նարեկացին իր սրտի քաղաքի (հոգևոր) պաշտպանությունը վստահում է Աստծուն.

91 «Զի թէ յարիցէ ի վերայ իմ պատերազմել,
92 Տեսեալ զքաղաքն ունայն ի զօրաց,
94 ԶՔեզ, Տէր, ունիմ մշտնջենաւոր եւ աննիրհելի պահապան»

Բան ԿԶ – (դ - 91, 92, 94)

Մտահայելով Քրիստոսի որևէ արարք՝ Նարեկացին հոգեպես հարաբերվում է Նրա հետ ու զորություն առնում...

Եթե (սատանան) ջանա ինձ կործանել, թող քո ծնրադրությունը նրա դեմ դուրս բերեմ որպես վահան[36] *[հմմտ. Բան ԿԶ – ե – (98–99)]:*

Եթե կամենա (ինձ)՝ աստվածապատկեր մարդուս, երկրաքարշ դարձնել ու իրեն երկրպագել տալ, թող քո աղոթական խոնարհումը (Աստծո երեսդ հողին ծռեցնելը)՝ նրան ամոթալի պարտության մատնի[37] *[հմմտ. Բան ԿԶ – (ե - 100–101)]:*

Եթե վաստակս (թշնամին) ցավով շաղախի, քո արնախառը քրտինքը (թո՛ղ) նրան հալածի[38] *[հմմտ. Բան ԿԶ – (ե - 102–104)]:*

Եթե զգայարաններս հոգիս պատանդ վերցնեն և չթողնեն քեզ ծառայել (թո՛ղ) քո կրած կապանքներով ես ազատագրվեմ[39] *[հմմտ. Բան ԿԶ – (ե-105–106)]:*

Եթե (չարը) բռնադատելով (ինձ) աստվածային պարգևների ուրացության մղի, աստվածամարտ հայհոյողների հանդեպ քո համբերությունը (թո՛ղ) նրան պապանձեցնի[40] *[հմմտ. Բան ԿԶ – (107–109)]:*

---

[34] *Հմմտ. Հ.Ն ա լ յ ա ն, էջ 480:*
[35] *Հմմտ. նույն տեղում, էջ ոկե:*
[36] *Հմմտ. նույն տեղում, էջ 481:*
[37] *Հմմտ. նույն տեղում:*
[38] *Հմմտ. նույն տեղում, էջ նձբ:*
[39] *Հմմտ. նույն տեղում:*
[40] *Հմմտ. նույն տեղում, էջ 482:*

Եթե չարի հրեշտակը լույսի հրեշտակի կերպարանքով ձգտի ինձ խաբել (թո՛ղ) ձորձով քո գլխի ծածկումն ու բռնցքահարումը (որ հրեաների կողմից լրբության և հանդգնության վերին աստիճանն էր)՝ նրան չարաչար տանջի[41] [հմմտ. Բան ԿԶ – (ե - 112–114)]:

Եթե հանդգնի «ձեռքերս կապել» կամ գործնական կյանքս կապանքել ու գործելու վստահությունից զրկել (թո՛ղ) եղեգն մատուցած ստեղծողիդ աջը (նրան) չարչարելով լռեցնի[42] [հմմտ. Բան ԿԶ – (ե - 115 – 117)]:

Եթե մեջս մտնելով, դիվալլկությամբ չարն ինձ ծաղրի, (թո՛ղ) ծաղրողների հանդեպ քո՝ ամենազորիդ համբերությունը (նրան) իբրև տկար ու անզորի՝ արհամարհի և հեգնի[43] [հմմտ. Բան ԿԶ - (ե – 118–119)]:

Եթե բազմակերպ հնարքներով կամենա ինձ դյութել կամ խաբել (թո՛ղ) Հզորիդ դեմքին տրված ապտակը (նրան) սաստկապես ամաչեցնի[44]:

Եթե գիշերային մթության խավարում խաբեությամբ հետս մարտնչի, (լրբաբար) մեղքերի մեջ գցելու համար, քո լույսի ճառագայթից, (թո՛ղ) խայտառակվի[45] [հմմտ. Բան ԿԶ – (ե - 123–125)]:

Եթե միջօրեի տապի փորձությամբ՝ արեգակնակեզ վատնիչ խորշակով կամենա (ինձ) արմատախիլ անել, խաչիդ նշանի զորությամբ արմատահան լինելով (թող) ինքը չորանա[46] [հմմտ. Բան ԿԶ – (ե - 126–129)]:

Ըստ Քրիստոսի առակի՝ (Մատթ., Ժգ-6)՝ Աստծո խոսքը մարդկային հոգում չի պտղաբերում նրա ապառաժային խստասրտության և մոլության քարերի առկայության պատճառով, երբ բարեբեր հողի կամ խոնարհության պակասություն է, իսկ խոնավության անբավարարությունը առնչվում է երկնային ցողի կամ շնորհների հետ, երբ կեսօրվա տապի (նեղությունների ու փորձությունների) ժամանակ ուժեղ արմատ (զորավոր հավատ) չունենալով (մարդը) թողնում է աստվածապաշտական ընթացքը, կտրվում Եկեղեցուց՝ չդիմանալով գայթակղությանը[47]: Իսկ կեսօրվա տապի աղբյուրը մեղանչական արեգակն է (արուսյակը) կամ սատանան, որն ըստ «Երգ երգոցի»՝ խեթ նայեց ինձ, որպեսզի խանդավառությամբ աճ տվածն էլ խլելով խաչի զորությունից՝ չորացնի[48]:

Եթե (սատանան) ջանա ինձ շնորհազրկել, թուքը, որ իմ փոխարեն ընդունեցիր երեսիդ, (թո՛ղ) ամաչեցնի նրան[49] [հմմտ. Բան ԿԶ – (ե - 130–132)]:

Եթե երկաթյա ժանիք ցույց տա ինձ, որ Դանիելի մարգարեության (Դան, Է-7) չորրորդ գազանի նման երկաթյա ժանիքներով ուտում էր, մանրում ու մնացորդներն էլ ոտնակոխ անում, ապա Պիղատոսի առաջ Երկնավորիդ լռությունը, (թո՛ղ) նրան համրացնի[50] [հմմտ. Բան ԿԶ – (զ - 133–134)]:

---

[41] *Հմմտ. նույն տեղում:*
[42] *Հմմտ. նույն տեղում, էջ նձգ:*
[43] *Հմմտ. նույն տեղում:*
[44] *Հմմտ. նույն տեղում, էջ 483:*
[45] *Հմմտ. նույն տեղում:*
[46] *Հմմտ. նույն տեղում:*
[47] *Հմմտ. նույն տեղում, էջ 483 – նձդ:*
[48] *Հմմտ. նույն տեղում, էջ նձդ:*
[49] *Հմմտ. նույն տեղում, էջ 484:*
[50] *Հմմտ. նույն տեղում, էջ 484 – նձե:*

Եթե «ցանկականի» խայթոցներով ձգտի տիրել հոգուս, (թո՛ղ) Արարչի ձեռքերիդ բևեռների հարոցը նրան կսկծեցնի[51] *[հմմտ. Բան ԿՋ – (q - 135–136)]:*

Եթե մոլորեցնելով ինձ՝ ոտքերս անիրավության ճանապարհով ընթանան, Քո՝ Անհասանելիիդ ոտքերը տանջահարող մեխերը նրան կապանքի[52] *[հմմտ. Բան ԿՋ – (q - 137–138)]:*

Եթե կամենա նենգությամբ ու խաբեությամբ հրապուրել ինձ, քացախն ու լեղին, որ իմ փրկության համար խմեցիր, (թո՛ղ) նրան դառնապես վշտացնի[53] *[հմմտ. Բան ԿՋ – (q - 139–141)]:*

Եթե առաջին հանցանքի (կամ անհնազանդության մեղքի) մեջ ինձ պարտական գտնի կամ մեղադրի, (թո՛ղ) խաչիդ սոսկալի խորհրդով՝ ինչպես կարթով, բռնվի և իսպառ դատապարտվի[54] *[հմմտ. Բան ԿՋ – (q - 142–143)]:*

Եթե սպանելու համար ինձ վիրավորի, (թո՛ղ) այն տեգով, որ Ադամի ստեղծողիդ կողը խոցվեց, ինքը սատակվի[55] *[հմմտ. ԿՋ – (q - 147–149)]:*

Եթե … պատի ինձ դժոխային վշտերի երկունքի ցավերով ու հուսահատությամբ, (թո՛ղ) Անպարփակելիիդ պատանքի կտավը ուռկանի նման նրան կաշկանդի[56] *[հմմտ. Բան ԿՋ – (q - 150–151)]:*

Եթե (նա) խաբելով ինձ, դժոխք տանող ճանապարհը ուղիղ ներկայացնի, և «մահվան հատակը տեսնելուն» դրդի, (թո՛ղ) մահվան գերեզմանում Քո բնակվելը նրան կործանի, քանզի մահով մահվանը հաղթեցիր[57] *[հմմտ. Բան ԿՋ – (q - 152 – 153)]:*

Եթե բնությանս տկարության պատճառով, մարդկորեն գործած մեղքերիս վրա նա չարախնդա[58] *քո փառավոր հարությամբ, որ հնացյալիս նորոգեցիր և մահվան բանտարկյալներին ազատեցիր, կարկամած կամքով կրկին կորանա*[59] *[հմմտ. Բան ԿՋ – (q - 154 – 157)]:*

Այսպիսով, Նարեկացին չարից պաշտպանվելու համար մտահայեցաբար հաստատվում է խաչի ճանապարհով ընթացող Քրիստոսի «մեջ» («զորանում Նրա անզորությամբ», Նրա հետ խաչ բարձրանում, որպեսզի չարչարանքներով մեռցնի իր մեղսահակ բնությունը՝ միավորվելու համար Նրա հարությանը): Այսինքն, Աստծո հետ միությունը իրագործվում է ոչ թե աստվածային Լեռան կատարին՝ խորհրդական Մեգի մեջ կամ խորհրդական սիրո առագաստում (ինչպես «Հայր մեր» աղոթքի պարագայում[60]*), այլ Գողգոթայի բարձունքում աղքատի հագուստներով ծպտված խորհրդավոր արքայի հոգեբարոյական և մարմնական տառապանքներին կցորդվելով:*

Մեղքի դեմ պայքարը, սակայն, առավել արդյունավետ է իրագործում Եկեղեցին, քանի որ մարմնական զգայարանները (որով մեծ մասամբ նաև մեղքն է

---

[51] *Հմմտ. նույն տեղում, էջ նձե:*
[52] *Հմմտ. նույն տեղում:*
[53] *Հմմտ. նույն տեղում:*
[54] *Հմմտ. նույն տեղում:*
[55] *Հմմտ. նույն տեղում:*
[56] *Հմմտ. նույն տեղում, էջ 485:*
[57] *Հմմտ. նույն տեղում:*
[58] *Հմմտ. Նարեկ, գրաբարից արդի հայերենի փոխադրության հեղինակ՝ Աշոտ Պետրոսյան, Երևան, 2010, էջ 274:*
[59] *Հմմտ. նույն տեղում:*
[60] *Տես՝ Վ. Լ ա լ ա յ ա ն. նշվ. հոդվ., էջ 23:*

մուտք գործում) ուղղորդում է «աստվածապաշտական աշխատանքի» (ծիսական «գործողությունների» և աղոթքի): Ի վերջո, Եկեղեցու (կամ աղոթքի տան) առաքելությամբ է պայմանավորված աղոթքի բուն ընթացքը. «զի ոչ ոք կարէ ելանել յերկինս, Եթե ոչ դրամբ այսորիկ նիւթաւորս Եկեղեցւոյ»[61]: Ինչպես մայրն է ծնում երեխային, մաքրում, կերակրում, խնամում, հագցնում և առողջ ու պատշաճ ներկայացնում հորը, այնպես էլ Մայր Եկեղեցին է հոգևոր երկունքով (մկրտությամբ) ծնում հավատացյալին (կերակրում Աստծո խոսքով, լուսավորում Ս. Երրորդության հավատքով, մաքրագործում ապաշխարության խորհրդով ու Աստծո պատվիրաններով), իր խորհուրդներով, վարդապետությամբ, քարոզչությամբ, կրթությամբ մարդուն պատրաստելով Երկնային Հորը (կամ Ս. Երրորդությանը) ներկայացնելու համար: Եվ չլինի այնպես, որ ջերմեռանդությամբ մուտքս և քավությամբ ելքս (Եկեղեցի) ՝չստացվի,– փափագում է Նարեկացին[62] [հմմտ. Բան ՀԵ – (բ-23)]: Ու ինչպես մայր թռչունն է իր թևերի մեջ առած պահում իր ձագերին, կերակրում, խնամում, պաշտպանում թշնամիներից, որ մի օր ինքնուրույն թռչել կարողանան, այնպես էլ Մայր Եկեղեցին է պատրաստում իր զավակներին, որպեսզի կարողանան կտրվել հողից՝ հաղթահարելով երկրի ձգողական ուժը (Ս. Հոգու շնորհներով երկրաքարշ մարդուց հոգևոր էակներ աճեցնելով) ու ճախրել երկնքում (այսինքն՝ աղոթել): Իսկ երբ չարի նետերից խոցված տեսնի նրանց ու վիրավոր ընկած (այդժամ) իր «բերանի շնչով» նոր կյանք կտա, վերքերին սպեղանի կդնի, կբժշկի, որպեսզի նորից աղոթական թևերով Երկինք բարձրանան ու հոգևոր բարձունքների գեղեցկությունը տեսնեն: Մտավախություն ունենալով ծերության հանդեպ, Նարեկացին առաջին հերթին (Աստծուց) մտքի ուշիմություն է խնդրում, ապա աղոթական միտք.

66 «Մի՛ ուշ իմաստին բարձեալ»

Բան ՁԷ – (գ - 66)

(Այսինքն հոգեվարքի ալեկոծության ժամանակ իմաստության լույս է խնդրում, որ կառավարիչ է անձին, ինչպես ղեկը՝ նավին)[63]: Եվ չլինի, որ Մյուռոնի յուղով կնքվածների կուտակած առաքինության գանձերի վաստակը հոգեվարքի ժամին հուսահատությամբ ոչնչացվի[64].

540 «Ո՛չ ի ստորեւ ելիցն զմթերս
541 գանձուն կենաց յիմարաբար արտաքս հանել»

Բան ՂԳ – (իդ - 540–541)

68 «Մի ամբարձմանն թեւք՝ փետտեալ»

[61] *Հմմտ. Հ. Ն ա լ յ ա ն, էջ շլա:*
[62] *Հմմտ. նույն տեղում, էջ 531:*
[63] *Հմմտ. նույն տեղում, էջ 649:*
[64] *Հմմտ. նույն տեղում, էջ էձժ:*

Բան ՁԷ – (գ - 68)

Ըստ Նալյանի, այստեղ խոսքը մարդու մտքի խոհականության մասին է, որի օգնությամբ (անձը) թռչելով *«երկնային բարձունքներում» խոկում է Աստվածությունը*[65]*:*

Այսպիսով, մարդու հոգևոր զարգացման ու զորացման (հոգևորացման) ճանապարհն ուղղակի Եկեղեցու դռնով է անցնում, քանզի նրա մեջ է իրականացվում հաղորդակցությունը Ս. Հոգու շնորհական զորության հետ, որը վայրաքարշ ու ծանր մարդկային բնությանը տալիս է հոգևոր շնորհների թևեր՝ Երկնքի հետ հարաբերվելու համար.

145–146 «··· ընծայէ թռիչս մարմնոց ընդ թեթեւութիւնս
հոգւոց…»

Բան ՀԵ – (ը - 145–146)

Մարդ – Աստված խորհրդական սիրո հարաբերության անվտանգ տարածք է Եկեղեցին, որ կոչնակի ձայնով հրավիրում է հարսնացյալ հոգիներին գալ Եկեղեցի՝ «ի համբոյր փեսային Քրիստոսի»[66]*.*

53–54 «···անախտական սիրարկու անձնահամբոյրն
54 կցորդութեան… »

Բան ՂԲ – (գ - 53–54)

Կոչնակի ձայնով ու խաչի խորհրդով արդեն սկսվում է մարդու մաքրագործումը, քանզի խորհուրդների բարոյական ամպը.

91 «զամպս հրածինս...»,

Բան ՂԲ – (գ - 91)

որից ծնվում է մեղքի հուրը, ցրվում է[67]*: Այլ խոսքով, կոչնակի ձայնը վտարում է մարդու հոգեկան աշխարհից մտքի չար մտածումները, հեռացնում դիվային խորհուրդներից, ծուլությունից՝ ներքին դատարկությունը լցնելով Աստծո փառաբանությամբ և սուրբ աղոթքով: Կոչնակի ձայնը (այսպես) արթնացնելով հավատացյալի ջերմեռանդության ոգին, կարծես, դառնում է Աստծո «ձեռքի» մի գործիք, քանի որ Աստծո հոգին «զարթնեցնելով» մարդու մեջ՝ կանչում է աղոթքի.*

132 «զարթուցիչ Հոգւոյն առ մեզ»

---

[65] *Հմմտ. նույն տեղում, էջ 649:*
[66] *Նույն տեղում, էջ 713:*
[67] *Հմմտ. նույն տեղում, էջ 714:*

Բան ՂԲ – (ը - 132)

Մեղքի քնի մեջ մեռնողի համար կոչնակի ձայնը այսպիսին է՝ ըստ Նարեկացու.

190– 196 «··· ձայն ուրախութեան, բարբառ բերկրութեան, նիւթ երանեւթեան,
պատճառ Փրկութեան, առիթ քաւութեան, մերժումն վշտաց,
ընդարձակոթիւն նեղութեանց, համառաւտումն խեթմանց, հալածումն
հեծութեանց, թեթեւութիւն թառաչմանց, յապահովութիւն կարեաց,
սփոփութիւն վհատմանց, բժշկութիւն ցաւոց, ...ուշադրութիւն անտեսիցն»,

Բան ՂԲ – (ժ - 190–196)

քանզի «յառնելով ի պաշտոն քո՝ ազատիցուք խեղդմանէ»[68]:

Այսպես Եկեղեցին դառնում է մի կամուրջ կամ սանդուղք, որ միացնում է Երկինքն ու երկիրը: Եվ այս պաշտամունքային կամրջով Նարեկացին խնդրում է Քրիստոսին, որ Իր Հորը մարդկանցից օրհնություն հասցնի և (պաշտամունքով) աղոթքով նրանց միացնի Իրեն.

197 «Ի յայս կամուրջ ցանկալի, անխոտոր եւ անխոտորնակ եւ ի 198
վերնաշաւիղ, բարձրաբերձ, սրբահետ սանդուղ երկնաչու առ Հայր
199 Քո աւրհնաբան, ահաւոր անուն ձգեալ մատուցես, բարերար,
200 Հոգւոյդ առաջնորդութեամբ միանալ ի քեզ անընդմիջելի»

Բան ՂԲ – (ժա - 197–200)

Աղոթքի ժամանակ այս կամ այն առաքինության ազդեցությունը կարող է գերակայել ըստ աղոթքի բովանդակության կամ ըստ անձի «հոգեւոր կուտակումների» աստիճանի: Քրիստոնեական աղոթքի հիմքում ընկած են երեք աստվածային առաքինությունները (հավատ, հույս, սեր), որոնց ազդեցությամբ մյուս առաքինությունները խորհրդապատվելով (Ս. Հոգու շնորհով) բխեցնում են որդեգրության հոգին, որ Քրիստոսին կամ Ս. Հոգուն բնորոշ առաքինությունների մի ծաղկաբույլ է: Վերջինս արդեն տարբերվում է «Հին Ուխտի» հոգևոր գիտակցության դրսևորումներից (ինչ-որ առումով փարիսեցու և մաքսավորի աղոթական կեցվածքները դրա վկայությունն են).

3 «Զի ըղձալի են քեզ, բարերար,
4 Աղաչանք մեղաւորաց, քան զխնդրուածս արդարոց...»

Բան ԾԹ – (ա - 3–4)

[68] *Նույն տեղում, էջ 720:*

Քրիստոսի «բերած» արդարության չափանիշներով կրթված և Ս. Հոգու շնորհի լույսով լուսավորված Եկեղեցու հավատացյալի ինքնագնահատման աստիճանը համեմատելի չէ նախաքրիստոնեական արդարների հոգևոր տեսողության հետ: Այստեղ Նարեկացին սակավախոս չէ, այլ իր անունից հարցնում է՝ ինչպե՞ս.

32 «Իբրեւ զԴաւիթ ասէի՝
33 Արարի զիրաւունս եւ զարդարութիւն»

Բան ԾԹ – (բ - 32–33)

կամ՝

35 *«Զմեղս թէ տեսանէի ի սրտի իմում, մի՛ լուիցէ ինձ տէր»*
36 *«Թէ էի իբրեւ զԵղիա, ասէի զանձն իմ այր Աստծոյ»*
40 *«Թէ էի իբրեւ զՊաւղոս, ասէի զիս բնակարան»,*
41 *«Ազդարան եւ ընդունարան Աստուծոյ Բանին»*

Բան ԾԹ – (բ - 35, 36, 40, 41)

Այսպես ոչ թե նվաստացվում են Հին Ուխտի ընտրյալները, այլ հաստատվում են զգուշավոր քրիստոնեական մոտեցումները.

20 «Եւ արդ, առողջքն անդամաւք անկարաւտք են բժշկութեան,
21 Եւ տեսանողականքն աչաւք չունին պէտս առաջնորդի,...»

Բան ԾԹ – (բ - 20–21)

(Իսկ իրենց սուրբ, անմեղ, արդար կարծողները, «կկտրվեն» Ս. Հոգուց և պատրանքի մեջ կհայտնվեն): Պողոս առաքյալի պարագան մի քիչ տարբեր է, քանի որ նա ոչ մի բան իրենից չէր համարում: Կարևոր է նաև նշել, որ «հին մարդուն» հատուկ էր համեմատությունն ու հակադրությունը՝ մենք արդարներն ենք, նրանք մեղավորները, մենք Աստծո ժողովուրդն ենք՝ պիտի վայելենք, նրանք կռապաշտներ են, պիտի ոչնչացվեն կամ զրկվեն (Եկեղեցու նախատիպ հանդիսացող հին Իսրայելի մեջ այս գիտակցությունը չափազանց խոր արմատներ էր ձգել, որի դեմ դուրս եկավ Հովհաննես Մկրտիչը): Եկեղեցու ընտրյալները ոչ միայն հեռու էին համեմատությունից ու հակադրությունից, այլև Աստծո առաջ իրենց ամենամեղավորն էին համարում ու աստվածային շնորհի վաստակները չէին սեփականացնում՝ անհատական ջանքերը ևս համարելով Ս. Հոգու շնորհական ներգործության արդյունք: Եվ եթե Նարեկացին վարանում է սաղմոսերգուի բառերով ասել,

92 *«Թէ՝ բազուկք ամբարշտեաց խորտակեսցին,…»*
90 *(կամ – Վ. Լ.) «թէ՝ Չարք վաղվաղակի սատակեսցին»*
94 *(և – Վ. Լ.) «ահա մեղաւորք կորիցեն, ...»*

Բան Կ – (գ - 92, 90, 94),

ապա ոչ միայն իր «շահերն է պաշտպանում» (քանզի իրեն է ամենամեղավորը համարում) ու իր աչքի գերանի համար մտահոգվում (ըստ Նոր Կտակարանի), որ չլինի մաքրված գերեզման, այլև իր մեղքերի ծանրությունից խոնարհված բնության գիտակցությամբ՝ նոր մարդու հոգեկեցվածք է դրսևորում, որն էլ ամենաընդունելին է Աստծո առաջ.

69 *«Զիա՞րդ…*
70 *«Մեծս մեղաւորաց, նկունս պիտանեաց՝*
71 *Ասել ընդ սրբոյն, թէ՝ ի բա՛ց կացէք յինէն*
72 *Ամենեքեան, որ գործէք զանաւրէնութիւն…»*

Բան Կ – (գ - 69–72)

Աղոթքի խորհրդաբանությունը բազում հանգույցներով կապակցված է խաչելության ուրբաթ օրվա հետ, երբ մեղքի պատճառով Դրախտում ընդհատված մարդ – Աստված երկխոսությունը չափազանց թանկ գնով պիտի վերականգնվեր: Աստծո Որդու թափած արյամբ սրբվելով, հավատացյալը հոգևոր ծննդյան երկունքով նոր «սիրտ է առնում» և Երկնքի Արքայության բարիքները ճաշակում՝ դառնալով «ընտանի» և Աստծո որդեգիր: Այս առումով Քրիստոսի խաչելությունը որպես Կենաց ծառի խորհրդանիշ, բարի պտղաբերություն էր մարդու համար՝ անկախ մեծ զոհագործության ծնած անտանելի ցավի ողբերգության չափից: Նարեկացին ոչ սովորական զգացողությամբ է պատկերագրում այս հակասական իրավիճակը.

7 «...եկն եհաս ժամ բարեպատեհ»
8 «գրել ինձ զայս նուագ ձայնի հեծութեան զուարճախառն երկիւղիւ»

Բան ՀԷ – (ա - 7–8)

Խաչի ճանապարհին Քրիստոսի կրած նվաստացումները, արհամարհանքը, դառը կատակները, հոգեկան վերքերն ու անբուժելի ցավերը՝ ըստ Հովհաննես Ծործորեցու, փրկում են մարդուն դիվային ուժերի ձեռքին խաղալիք դառնալուց, իսկ նրա փշե պսակը խորհրդանշում է մարդկության մեղքերի փշերը իր վրա վերցնելը[69]: Քրիստոսի փշե պսակը, խաչված մարմինը, դառնացած հոգին ուսուցանում են մարդուն աղոթքի ժամանակ ունենալ ճնշված մարմին, մեռյալ զգայարաններ, մեղքերի զոջումից տրտմած սգավոր հոգի, փշրված սիրտ ու ներքին արթնություն[70]: Խաչի վրա Քրիստոս չարչարվեց ինչպես կատարյալ ճգնավոր, որ մեռցնում է իր բոլոր անդամները և հրաժարվում

[69] *Հմմտ. նույն տեղում, էջ 560:*
[70] *Նույն տեղում:*

սեփական կամքից: Իսկ հավատացյալները (խաչված) աջակողման ավազակի օրինակով մեղսագերծվելով միայն կարող են Ս. Հաղորդությամբ միանալ Քրիստոսի հետ[71]: Այսինքն՝ խաչված (ճնշված) մարմնով, մաքուր խղճով, մեռյալ զգայարաններով, Աստծո երկյուղով ու բարի խոհականությամբ.

55 «Մի՛ յայտնեսցին փուշք մեղանաց ի սրբութիւնս մտացս.»

Բան ՀԸ – (գ - 55)

Նարեկացու համար աղոթքի բանաստեղծումը կամ արարումը ընդունելի կլիներ, եթե այն իրագործվեր Ս. Հոգու շնորհով ու իմաստությամբ, որպեսզի այն առավել հաճելի լիներ (հենց) Աստծուն՝ սրբագործելով և՛ իրեն, և՛ ընթերցողներին.

57 «Մի՛ մերժեսցես զարուեստ զաւրութեանն լեզուոյս յարմարութեան»

Բան ՀԸ – (գ - 57)

Սրբերի, մարտիրոսների, ճգնավորների և նույնիսկ (Աստծո) հրեշտակների բարեխոսությունը խնդրելը քրիստոնեական աղոթական մշակույթի անբաժանելի մասն է ու հիմնված է այն մտածողության վրա, որ սիրելի լինելով Աստծուն, վերջիններս կարող են բարի միջնորդությամբ սատար կանգնել մարտնչող Եկեղեցուն (կամ Նրա մի անդամին), առավել ևս, որ իրենք էլ մարդկային կյանքի ուղի են անցել (բացի հրեշտակներից) և անծանոթ չեն երկրային կյանքի խնդիրներին:

Առաջին անձնավորությունը, որին դիմում է Նարեկա վանքի աղոթարարը, Ս. Մարիամ Աստվածածինն է (Աստվածամորը նա որպես միջնորդ է տեսնում ու «ոչ իբրեւ տուօղ զյուսալիսն»[72]): Այսուհանդերձ, Նարեկացին խորապես զգում է, որ ոչ սովորական մի անձի բարեխոսությունն է հայցում.

28 «Աւժանդակեա՛ թեւոցդ աղաւթիւք…»
35 «Բարեխաւսեա՛, խնդրեա՛, աղաչեա՛ »
40 «Ընդ իմում թշուառի՛ս հոգա, խորան բարձրելոյդ,
41 Զե՛ռն տուր անկելոյս, տաճար երկնային:
42 փառաւորե՛ա զՈրդիդ քո ի քեզ՝
43 Աստուածաւրէն ինձ հրաշագործել քաւութիւն եւ ողորմութիւն»

Բան Զ – (բ - 28, 35, 40–43)

Սրբերի բարեխոսությունը խնդրելը ևս Աստծո հետ «միավորության հասնելու» անուղղակի ճանապարհ է.

[71] *Հմմտ. նույն տեղում, էջ 575:*
[72] *Նույն տեղում, էջ 609:*

«Օրհնէ զբնութիւնս՝ որ էր անառակ
վասն միացմանն՝ առ Որդին անքակ...»[73] *:*

Եվ ընհանրապես, Նարեկացու խնդրվածքները կրում են ճգնավորական և խորհրդապաշտական ձգտումների դրոշմը.

52 «Թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես, միշտ սուրբ կոյս,
53 Թէ զմերժեալս ընտանեցուսցես, մեծարեալդ աստուծոյ,»
55 «Թէ զծփեալս հաստատեսցես, հանգիստ,
56 Թէ ի խռովութեանցս յուզմանց փոխեսցես զիս, խաղաղարար,»
60 «Թէ զբաժանմանն իմ խտրոց քակտեսցես, հաշտութիւն,
61 Թէ զանմաքրութիւնս իմ բարձցես, եղծման ընդոտնիչ,»

Բան Ձ – (գ - 52–53, 55–56, 60–61)

Իր աղոթական «ընթացքի մեջ» Նարեկացին չափազանց կարևորում է զգուշացումն այնպիսի արմատական մեղքից, ինչպիսին պղերգությունն է կամ ծուլության մեղքի քնի մեջ ընկած՝ հոգևոր արթնության կորուստը, որ սատանայի որմնացանության (կամ չար խորհրդոց) հնարավորություն է տալիս[74]*.*

64 «Եւ քանզի բուսացեալ տնկեցի յոգիս,
65 փոխանակ ցորենոյն բարեսերմութեան,
66 խոտս խայթողականս, ինքնաթոյնս ընդարմացուցիչս»
68 «Զիա՞րդ ոչ կոչեցից զանձն իմ գարշելի անդաստան
69 Անիծաբեր փշովք մեղաց հեղձեալ»

Բան ՁԳ – (գ - 64–66, 68–69)

Այս վիճակից փրկությունը ճշմարիտ աղոթական կեցվածք ընդունելն է, երբ մարդկային բնությունն ամբողջությամբ ենթարկվում է Աստծուն (հոգու կամքը հնազանդ է Աստծուն, իսկ մարմնի կամքը՝ հոգուն), «որպեսզի մարմինս իմ՝ կամաց հոգւոյս խորնահեսցի եւ միշտ ընդ հոգւոյս միաբանեալ՝ ի կամս քո հայեսցի»[75]*: Սակայն հեշտասեր մարմնահակ կամքը իր դիրքերը դյուրությամբ չի զիջում.*

75 «Լայնեցի, ընդաձակեցի, ըստ մոլեկան բարուցն Յուդայի,
76 Զանկողին կամացս՝ դիւացն հոմանեաց»

Բան ՁԳ – (գ - 75–76)

[73] *Նույն տեղում, էջ գճժ (Նալյանն անցնում է չափածո ոճի –* Վ. Լ.*):*
[74] *Հմմտ. նույն տեղում, էջ 636:*
[75] *Նույն տեղում, էջ 637:*

Այս անգամ անձն իր կամքի հեշտության անկողինը ընդարձակելով, հոմանի դներին բնակարան է դարձնում, ու թողնելով երկնային փեսային՝ պոռնկանում նրանց հետ[76] (հմմտ. Եսայի, ԾԷ - 80)[77]:

Ճգնավորի համար առաջնահերթ խնդիրը զգայական կրքերի հաղթահարումն է, «որ անասնականք են եւ զերկաւորս ախորժեն»[78]: Այս գործում, սակայն, անհատական ջանքերը դեռ բավարար չեն և Ս. Հոգու շնորհական ներգործությամբ մարդկային բնության զորացման կարիք է զգացվում.

29 «Վերացո՛, տէր, ի զգայութեանցս զմածեալս յիմարութիւն»

Բան ՁԴ (29)

Եվ եթե անձը դառնա իր բնության մի կեսի ծառան, ապա անհնարին կլինի առաքինության շավիղներով ընթանալը, որովհետև արտաքինից (ըստ մարմնի) մարդ կերևա, իսկ ներքուստ՝ (հոգով) անասուն, և զգայարանների գերի[79]: Այստեղ Խաչի զորությունը ևս զորավիգ է աղոթականին.

35 «Խաչիդ տեառնագրութիւն ընդ շունչս
36 Եւ ընդ մարմի՛նս համասփիւռ տարածեսցի»

Բան ՁԴ – (35–36)

Ինչպես Աստված մարդուն «գտնելու» համար Իրեն զոհ մատուցեց, այնպես էլ Աստծուն փնտրելու (Նրան մերձենալու) մարդկային ընթացքը ինքնազոհաբերության ճանապարհ է: Ճգնավոր Նարեկացին այս ուղին հատում է գիտակցաբար՝ հրաժարվելով իր կամքից, մարմնական ու հոգեկորույս մտածումներից, սրտի մեջ ամբարված անձնապաստան ձգտումներից.

1 «Եւ արդ, ջուր կամաց եւ կաթ արտասուաց
2 Բեկութեամբ հոգւոյս, մտացս լքմամբ,
3 Խորտակմամբ սրտիս հեղեալ առաջի...»

Բան ՁԸ – (ա - 1–3)

Այսպես խորհրդազգածը Աստծուն է ընծայաբերում ամենաթանկ ունեցվածքը՝ իր սիրտը («Զի ուր գանձք ձեր են՝ անդ եւ սիրտք ձեր եղիցին» Մատթ. Զ - 21), որ աղոթական խոսքի թևերով Երկնքի «դռներն է ծեծում».

9 «Եւ արդ, ընկա՛լ զայս հիւսուած բանի աղիողորմ հեծեծանաց,
10 Եւ հոտոտեսցի՛ս յայս նուէր բանի անարիւն զոհի, թագաւոր երկնի»,

[76] *Հմմտ.* Мистика преп. Макария Египетского.– Мистическое Богословие. Киев, 1991, с. 370.
[77] *Հմմտ. Հ. Ն ա լ յ ա ն, էջ ոլէ:*
[78] *Նույն տեղում, էջ ոխա:*
[79] *Հմմտ. նույն տեղում, էջ 641:*

Բան ՁԸ – (բ - 9–10)

Հարկ է նաև նշել, որ Նարեկացու սրտից ելնող աղոթքի ջերմեռանդությունը բխում է Ս. Հոգուց և այն Աստծո Որդուն բնորոշ առաքինություն է ու խորհրդանշում է եղեգնախունկը՝ («վասն հաշտարար բուրման խաղաղութեան եւ աղօթիցն ջերմեռանդութեան»[80]), քանզի Մյուռոնի մեջ առկա յուրաքանչյուր ծաղկաբույր խորհրդանշում է Քրիստոսի անձի որոշակի առաքինություն, որ բացահայտվել է մարդեղության ժամանակ.

252 «Ծաղիկ դաշտի եւ շուշան հովտաց եւ
253 նարդոս ընտիր եւ եղեգնախունկ՝ խառնեալ հալուէիւ,
յարմարութեամբ
254 հոտոյ քրքմոյ՝ փթթեալ ողկուզոյ
եւ ազնիվ գինւոյ»

Բան ՂԳ – (ժա - 252–254)

«Մատյան Ողբերգության» աղոթագիրքը Աստծուց տրված (Ս. Հոգու շնորհի հանճարով ծնված) ողորմություն է Նարեկացուն (և աշխարհին), ինչպես նաև Նարեկացի քահանայի նվերն է Աստծուն, որի սրբագործման համար նա խնդրում է.

10 «Եւ հոտոտեսցի՛ս յայս նուէր բանի անարիւն զոհի, թագաւոր երկնի,
11 Եւ աւրհնեալ սրբեա՛ զտառ մատենի այսր ողբերգութեան»

Բան ՁԸ – (բ - 10–11)

Նարեկա վանքի իմաստասերը, սակայն, ձգտում է հասնել անդադար աղոթքի «մատույցներին»՝ բացառիկ մի եղանակով, որ իր փոխվելուց հետո էլ «Ի խորոց սրտի» Աստծուն ուղղված խոսքերը չլռեն, այլ գալիք սերունդների շուրթերով անվերջ բարբառեն.

12 «Եւ գրեալ դրոշմեսցե՛ս յարձան յաւիտեան
13 ընդ հաճոյականացն սպասաւորութիւնս
14 Կացցէ առաջի քո մշտնջենաւոր»:

Բան ՁԸ – (բ - 12–14),

որպեսզի՝

15 «յիշատակեսցի՛ ի լսելիսդ քո հանապազ,»
17 «Եւ խաւսեսցի՛ բերանովք հրեշտակաց քոց»

[80] *Նույն տեղում, էջ 690 – գրա:*

18 «Տարածեսցի հանդէպ աթոռոյ քոյ
19 Եւ ընծայեսցի՛ ի սրահ սրբութեան քոյ,
20 Խնկեսցի՛ ի տաճար անուան քոյ
21 Եւ բուրեսցի ի սեղան փառաց քոց,
22 Պահեսցի՛ ի գանձարանի քում»:

Բան ՁԸ – (բ - 15, 17, 18–22)

Ըստ Նալյանի՝ գանձարանն Աստծո անմոռաց հիշողությունն է, որտեղ Նարեկացին ձգտում է պահել իր սրտի խորքերից պեղված գանձերը, որպեսզի ուրիշների աղոթելուց (որոնք «Մատյան»-ով պիտի աղոթեն) նաև ինքը համարվի աղոթած[81]*:*

МИСТИКА МОЛИТВЫ В «КНИГЕ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ» ГР. НАРЕКАЦИ В КОММЕНТАРИЯХ ПАТРИАРХА АКОБА НАЛЯНА

ВАГРАМ ЛАЛАЯН

Р е з ю м е

Анализ богословом мистики молитвы в «Книге скорбных песнопений» – это прежде всего описание процесса преодоления преград любовного воссоединения человека с Богом. Данная верующему посредством Христа душа усыновления уже дает эту возможность. Однако подвижник должен пройти всю дорогу очищающего покаяния, чтобы быть приятным Богу. Этот путь освящения Григор Нарекаци проходит через «омовение» души скорбными песнопениями, когда стонами и стенаниями сердца и полным покаянием очищается и избавляется от греха вся человеческая природа. Ибо, согласно отцам церкви, никто не может быть для Бога фимиамом и дымящимся ладаном (символы богоугодной молитвы и культового подношения), если не станет до того миррой (символ мистической смерти). То есть для Бога неприемлема молитва подвижника без принесения в жертву его греховной природы. А полное жертвоприношение со стороны священнослужителя Григора Нарекаци – это «Книга скорбных песнопений», которая излучает исповедь мистической любви: «Слово к Богу, идущее из глубин сердца…».

MYSTICISM OF PRAYER IN THE “BOOK OF LAMENTATIONS” OF GR. NAREKATSI IN HAKOB PATRIARCH NALYAN’S COMMENTARIES

VAHRAM LALAYAN

S u m m a r y

[81] *Հմմտ. նույն տեղում, էջ ոծա:*

Theologian's mystical analysis of prayer in the "Book of Lamentations", first and foremost, is a description of a process of overcoming impediments in man-God union of love. The spirit of son-hood adoption given by Christ to the believer already ensures that opportunity. However, the hermit ought to cross the way of purification of repentance in order to please God. Grigor Narekatsi passes this way of sanctification through lamentations and or purification, when by plaints and moans of heart and by complete confession he sets the whole human nature free of sin. Because according to church fathers' interpretation, no one can be frankincense and burning incense for God (symbols of worshiping consecration and God-pleasing prayer), without becoming a myrrh, first of all (symbol of mystical death). That is to say, without sacrificing the sinful nature, hermit's prayer would be unacceptable for God. Whereas, the "Book of Lamentations" of Narekatsi the priest is a complete sacrifice, burnt offering, wherefrom mysterious love confession is radiating: "Words to God from the depths of my heart…".